Դատաւորն կոչեալ զԻէորդ Պոտուռ առանձին յանցաւոր դատէ զՀայս, և դառնայ յառաջին խոստմանէ իւրմէ չտալ Հայոց այնքան ինչ, և չգնալ 'ի Բեթղեհէմ, եւ նա տայ նմա պատշաճաւոր պատասխանի՝ յայտ առնելով զինքնահաւանութիւն իւր, և զթեւարկելն Ցունաց. եւ ինքն կարէր խոհեմութեամբ չտալ տեղի խռովութեան 'ի Բեթղեհէմ, այլովքն հանդերձ։ Ապա յորդորէ զնա Դատաւորն զի հնարեսցէ առաքել առ ինքն զնուրի, զի հաճութեամբ նորին եղիցի գնալն, և Հայք բաղում թախանձանօք հաճեցուցին զնա, երթալ և դառնալ անվնաս երաշխաւորութեամբ դատաւորին, և ապա խորհրդակցեալ ընդ միմեանս որոշեցին գնալ, և Հայք սկսան պատրաստել զհարկաւորեալսն։ Լուեալ զայսոսիկ Ցունաց դիմեցին առ Քաղաքապետն եւ աղաչէին զնա յայս նուազ եւս ձեռնտու լինիլ ինքեանց և խափանել զգործն, որպէս արարեալ էր յառաջագոյն, մինչ ցգալուստ Կուսակալին եւ պատասխանի թղթոց իւրեանց 'ի Կոստանդինուպօլսոյ. զի առանց հրովարտակի ասէին, միայն գրով Դենպետին չէ հնար լուծանել զայսպիսի խնդիրս։ Եւ նա ասէ՝ Դենպետն Արքայի գրեալ է առ Դատաւորն և առ Միւմէլլայն կատարել զամենայն ինչ օրինօք Շէրիի, միթէ չիցէ՞ մեզ հրովարտակ սակս աքսորման Դատաւորին և Խոճաքեանին, ուստի ոչ կարեմ լինիլ ձեռնամուխ՝ երկնչիմ 'ի Թագաւորէն, և եթէ Դատաւորն կոչեսցէ 'ի ժողով՝ անյապաղ գնամ։ Եւ անտի չոքան առ Դատաւորն եւ մեղադիր լինէին նմա թէ զի՞նչ գործ գործեցեր ընդ մեզ, կործանեցեր զտուն Ցունաց. լաւ էր մեռանիլ քան տեսանել զայսպիսի օրս, օտար դատաւոր ոք ախոյեան եկաց Հայոց և խափանեաց զգործադրութիւն հրովարտակին, իսկ դու Երուսաղէմացի եւ բարեկամ մեզ՝ առանց հրովարտակին արկեր զմեզ 'ի տագնապ տառապանաց. բարուք խորհեաց եւ 'ի միտ առ զոր առնեսդ, և ապա զոր ունիս կրել, համբերեա մինչ ցգալուստ Բդեշխին եւ պատասխանի գրոց. եթէ սակաւ իցէ խոստումն, յաւելումք 'ի նոյն։ Դատաւորն ասէ. չէ հնար այժմ լինել, եթէ 1000 քսակ եւս տայցէք, զի Դենպետն հրամանաւ Թագաւորին գրեալէ կատարել զգործն գործակցութեամբ Մուվէլլային, սակայն չզրկեմ զձեզ, այլ բարե-